Հավելված
ՀՀ կառավարության 2015 թ.
մայիսի 21-ի նիստի N 22
արձանագրային որոշման

«

| | Միջոցառման անվանումը | Կատարող | Համակատարող | Կատարման ժամկետը | Ակնկալվող արդյունքը | Ֆինանսա-վորման աղբյուրը |
|---|---|---|---|---|---|---|
| 2.1 | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության <<Սոցիալական պաշտպանության ոլորտի ծրագրերում ընդգրկված և խնամք ստացող տարեցների ու հաշմանդամություն ունեցող անձանց հաշվառման տեղեկատվական համակարգում>> պահպանվող՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց հոգեկան խանգարումների վերաբերյալ տվյալների կոդավորում և համապատասխանեցում Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 19-ի <<Հայաստանի Հանրապետության տեխնիկատնտեսական և սոցիալական տեղեկատվության <<Հիվանդությունների և առողջության հետ կապված խնդիրների վիճակագրական դասակարգիչ>> | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | ՀՀ առողջապա-հության նախարարություն | 2015-2016թթ. | Հիվանդու-թյունների միջազգային դասակարգ-ման վերանայված 10-րդ դասակարգչին համապատաս-խանեցված տեղեկատվա-կան համակարգի առկայություն | Ֆինանսա-վորում չի պահանջում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | հաստատելու և Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 2005 թվականի մարտի 31-ի N 67-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին>> 871-Ն հրամանի պահանջներին: | | | | | |
| 2.2 | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության <<Սոցիալական պաշտպանության ոլորտի ծրագրերում ընդգրկված և խնամք ստացող տարեցների ու հաշմանդամություն ունեցող անձանց հաշվառման տեղեկատվական համակարգում>> պահպանվող՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց տվյալների ներառում Հայաստանի Հանրապետությունում ստեղծվելիք միասնական առողջապահական էլեկտրոնային տեղեկատվական համակարգ | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | ՀՀ առողջապա-հության նախարարություն, <<Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ>> ՓԲԸ /համաձայնությամբ | 2016-2017թթ. | Միասնական առողջապա-հական էլեկտրո-նային տեղեկատվա-կան համակարգի առկայություն | Դոնոր կազմակեր-պություններ (համաձայնու-թյամբ) |

»: